



Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերի 15-ին՝ 34 ամիս տևողությամբ, և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագիրն ուղղված է ՔՀԿ-ների՝ 9 թիրախային ոլորտներում հանրային քաղաքականությունների մշակման գործընթացի վրա ազդեցության ուժեղացմանը, ինչպես նաև ՔՀԿ-ների ցանցերի և կոալիցիաների կարողությունների զարգացմանը, նրանց կողմից թիրախային ոլորտներում կարևորագույն խնդիրների հատկորոշմանը և հանրային քաղաքականությունների մշակմանը (այդ թվում կոալիցիաների համար նախատեսված դրամաշնորհների միջոցով):

Ծրագրում նախատեսված է նաև 870,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամի դրամաշնորհային կոմպոնենտ, որը պետք է տրամադրվի ծրագրի աշխատանքներում ներգրավված ՀԿ-ներին՝ թիրախավորված 9-ը ոլորտներում առաջ քաշված խնդիրների լուծման, ինչպես նաև ՀԿ-ների կոալիցիաների կայունության և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար:

Կոնտակտային անձ՝  
Վահրամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՔՀԿ ոլորտի փորձագետ

Հեռ.՝ +37410 57 45 01  
Բջջ՝ +37499 46 29 34